

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց 1901/B07. Քաղաքական և իրավական ուսմունքների պատմություն

Որակավորման  
աստիճան՝

բակալավրի կրթական ծրագիր

Կազմեց՝

ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության  
ամբիոնի դոցենտ Գ.Ե. Հովսեփյանը

ԵՊՀ հրատարակչություն  
ԵՐԵՎԱՆ – 2013

**ԾՐԱԳՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

**1901/B07. Քաղաքական և իրավական ուսմունքների պատմություն. (5 կրեդիտ)**

Շաբաթական 4 ժամ (40 դասախոսություն, 24 սեմինար, 86 ինքնուրույն աշխատանք)

7-րդ կիսամյակ: Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց:

**Նպատակը և խնդիրները.**

Ուսանողին սովորեցնել պետության եվ իրավունքի վերաբերյալ մարդկային մտքի (ուսմունքների, տեսությունների, հայեցակարգերի) պատմությունը՝ սկսած Հին աշխարհից մինչև մեր օրերը, հաղորդակից դարձնել համաշխարհային իրավական մշակույթի գանձարանին:

**Դասընթացի խնդիրներից են՝**

- սովորեցնել քաղաքական և իրավական ուսմունքների հիմնական կատեգորիաները,
- սովորեցնել քաղաքական և իրավական ուսմունքների պատմության դերը և գործառույթները,
- սովորեցնել քաղաքական և իրավական ուսմունքների պատմության հիմնախնդիրները անտիկ, միջին և նոր ժամանակներում,
- իմացնել քաղաքական և իրավական ուսմունքների հիմնական հեղինակներին Հին, Միջին և Նոր դարաշրջաններում, բացատրել քաղաքական և իրավական ուսմունքների պատմության մեջ մեծ ներդրում կատարած հեղինակների և հոսանքների հայեցակարգերը,
- ներկայացնել քաղաքական և իրավական ուսմունքների հիմնական հայեցակարգերը 20-րդ դարում, սովորեցնել արդի դարաշրջանի առանձնահատկությունները և կանխագուշակել քաղաքական և իրավական ուսմունքների զարգացման հնարավոր ուղիները:

**Կրթական վերջնաարդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

- համեմատել և տարբերակել իրավունքի քաղաքական և իրավական ուսմունքների հիմնական կատեգորիաները, մեկնաբանել քաղաքական և իրավական ուսմունքների պատմության հետազոտման մեթոդները,
- քննարկել և ընդհանրացնել պատմական դարաշրջանների քաղաքական և իրավական ուսմունքների հիմնական գծերը, տիպերը,
- իրականացնել քաղաքական իրավական կարկառուն մտածողների հայեցակարգերի վերլուծություն և պարզաբանում,
- ճիշտ ընտրել քաղաքական և իրավական ուսմունքների հետազոտությունների մեթադաբանությունը,
- իրականացնել արդի պետաիրավական իրականության ավելի խորը, բազմակողմանի վերլուծություն՝ օգտագործելով քաղաքական և իրավական ուսմունքները, հայեցակարգերը,
- մեկնաբանել և գնահատել քաղաքական և իրավական ուսմունքների արդի հայեցակարգերը, դրանց մեթոդական հիմքերը, սկզբունքները,
- կանխագուշակել քաղաքական և իրավական իրավական զարգացման ապագան համաշխարհային զարգացման համատեքստում,
- տիրապետել իրավական երևույթների արժեքաբանական-փիլիսոփայական վերլուծությանը, քաղաքական-իրավափիլիսոփայական լեզվին և եզրույթաբանությանը:

***Քննությունների անցկացման ձևերը և գնահատման չափանիշները***

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 4 միավոր: Ստուգման ձևերն են. *1-ին ընթացիկ քննություն.* Գրավոր առաջադրանք՝ 4 հարցով, յուրաքանչյուր հարցի առավելագույն միավորը՝ 1, միավորների քայլը 0,5 է: Հարցի բովանդակության կեսից պակասը գրառելը գնահատվում է 0 միավոր, լիարժեքը՝ 2,5 միավոր: *2-րդ ընթացիկ քննություն.* գրավոր առաջադրանք, 4 հարցով, յուրաքանչյուր հարցի առավելագույն միավորը՝ 1, միավորների քայլը 0,5 է: Հարցի բովանդակության կեսից պակասը գրառելը գնահատվում է 0 միավոր, լիարժեքը՝ 2,5 միավոր:

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց՝ յուրաքանչյուրը առավելագույնը 2.5 միավոր, միավորների քայլը՝ 0.5:

Առաջին ընթացիկ գրավորը ներառում է դասընթացի 1-11 թեմաները, իսկ երկրորդը՝ 12-22:

**ԹԵՄԱ 1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄԵԹՈՂԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

(1 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար)

1. Քաղաքական և իրավական ուսմունքների ծագումը և զարգացումը: Քաղաքական և իրավական ուսմունքները քաղաքական և իրավական գիտակցության համակարգում: Ժողովրդական զանգվածների, հասարակական խմբերի և դասակարգերի, առանձին մտածողների դերը քաղաքական և իրավական գաղափարախոսության ձևավորման և զարգացման գործում: Քաղաքական և իրավական ուսմունքների ճանաչողական, գործնական, գաղափարախոսական տեսանկյունները:

2. Քաղաքական և իրավական ուսմունքների պատմության առարկան: Քաղաքական և իրավական ուսմունքների հասկացությունը և ընդհանուր բնութագիրը: Քաղաքական և իրավական ուսմունքների պատմության տեղն իրավաբանական գիտությունների համակարգում: Նրա փոխհարաբերությունը պետության և իրավունքի տեսության, քաղաքագիտության, ճյուղային իրավաբանական գիտությունների հետ: Քաղաքական և իրավական ուսմունքները որպես ազգային-պետական, դասակարգային և համամարդկային շահերի արտահայտություն: Պետության ապաքաղաքականացման, իշխանության բռնազավթման հաղթահարման, ինչպես նաև նրա հասարակականացման, ժողովրդավարացման և իրավականացման ուղղությամբ քաղաքական և իրավական մտքի առաջադրած երաշխիքները: Ավտոկրատական, տոտալիտար, տեխնոկրատական, էտատիստական, դասային-կաստայական, օխլոկրատական գաղափարների և տեսությունների հասարակական-դասակարգային հիմքերը և սահմանափակվածությունը:

3. Քաղաքական և իրավական ուսմունքների պատմության ուսումնասիրման մեթոդը: Քաղաքական և իրավական ուսմունքների պատմությունը որպես պետաիրավական գաղափարախոսությունների և տեսությունների ուսումնասիրման իմաստասիրական, պատմական և իրավաբանական հայեցակետերի համակարգված բանալի: Քաղաքական և իրավական ուսմունքների ծագման և զարգացման օրինաչափությունները: Քաղաքական և իրավական ուսմունքների բնութագրման և գնահատման չափանիշները: Բնականի և բանականի, պատմականի և տրամաբանականի, օբյեկտիվի և սուբյեկտիվի փոխադարձ կապը:

4. Քաղաքական և իրավական ուսմունքների պատմության ժամանակագրությունը: Դասընթացի կառուցվածքը: Առանձին երկրների (ռեգիոնների) քաղաքական և իրավական ուսմունքների պատմության և քաղաքական և իրավական ուսմունքների ընդհանուր (համաշխարհային) պատմության փոխադարձ կապը:

5. Քաղաքական և իրավական ուսմունքների պատմության գիտության դերը ժամանակակից գաղափարական կյանքում, մասնավորապես՝ պետաիրավական գիտության զարգացման գործում:

***Հարցեր 1-4 - անցկացվում են դասախոսություններ:***

***Հարց 5 - ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են ինքնուրույն աշխատանքի ընթացքում:***

**ԹԵՄԱ 2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ**

(2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար)

1. Քաղաքականության, պետության և իրավունքի վերաբերյալ կրոնադիցաբանական պատկերացումների ընդհանուր բնութագիրը մ.թ.ա. III-I հազ. Հին Արևելքի երկրներում: Հին արևելյան քաղաքական և իրավական գաղափարախոսության հետագա զարգացումը:

2. Տիրապետող հասարակական-քաղաքական և իրավական համակարգի բնութագիրը և նրա նկատմամբ հասարակության տարբեր խավերի վերաբերմունքի արտացոլումը հին եգիպտական խրատներում: Ախտո, Պտախտեպ, Ճարտասան յուդացի, Իպուսեր:

3. Հին Բաբելոնի քաղաքական և իրավական գաղափարախոսությունը: Համնուրաբիի օրենքները:

4. Հին Հնդկաստանի քաղաքական և իրավական գաղափարախոսությունը: Բրահմանականության և բուդդայականության ուղղությունները: Մանուի օրենքների

կաստայական բնույթը: Արտհաշաստրայի՝ տեսական արժեքը:

5. Հին հրեաների քաղաքական և իրավական գաղափարախոսությունը: Մովսեսի պատվիրանները և օրենքները:

6. Հին Պարսկաստանի քաղաքական և իրավական գաղափարախոսությունը: Զրահադաշտականության էությունը:

7. Հին Չինաստանի քաղաքական և իրավական գաղափարախոսությունը: Կոնֆուցիոսի բարոյաքաղաքական հայացքները: Նրա մտորումները լավագույն պետության և պետական իշխանության իրականացման ցանկալի մեթոդների վերաբերյալ: Մոցզիի քաղաքական և իրավական ըմբռումները: Դաոի ուսմունքը բնական և մարդկային օրենքների մասին: Լեզիստների քաղաքական և իրավական տեսությունը:

*Հարցեր 1-4 - անցկացվում են դասախոսություններ:*

*Հարց 5-7 - ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են ինքնուրույն աշխատանքի ընթացքում:*

**ԹԵՄԱ 3. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ (2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար)**

1. Քաղաքական պայքարի հիմնական ուղղությունները Հին Հունաստանում և նրանց արտացոլումը քաղաքական և իրավական ուսմունքներում:

2. Մովսեսների քաղաքական և իրավական գաղափարները: Նրանց հայացքները պետության ծափման, նրա իրավաստեղծ յործունեության, բնական և դրական օրենքների փոխհարաբերության մասին:

3. Մոկրատի քաղաքական և իրավական ուսմունքը: Գիտակների և առաքինիների կառավարման սկզբունքի իմաստը: Արդարացիի և օրինականի հարաբերակցությունը:

4. Պլատոնի քաղաքական և իրավական ուսմունքը: Պետության դասակարգային էության նրա ըմբռումը: Իդեալական պետության նախագծերը՝ Պետություն և Օրենքներ աշխատություններում: Պետության ձևերի դասակարգումը: Պետության և իրավունքի հարաբերակցությունը Քաղաքագետում: Պլատոնը որպես ինտելեկտուալ ընտրախավի գաղափարախոս:

5. Արիստոտելի քաղաքական և իրավական ուսմունքը: Նրա հայացքները պետության ծագման, նրա դասակարգային կառուցվածքի և էության մասին: Ստրկության հիմնավորումը: Պետության ձևերի դասակարգումը: Իդեալական պետության նախագիծը: Արիստոտելը իրավունքի էության և ձևերի, արդարության տեսակների մասին:

6. Պլատոնի և Արիստոտելի գաղափարական ազդեցությունը քաղաքական մտքի հետագա ընթացքի վրա:

7. Պոլիբիոսի ուսմունքը քաղաքական ձևերի շրջապտույտի մասին: Պետության խառը ձևի առավելության հիմնավորումը:

8. Էպիկուրյան և ստոիկյան հոսանքները:

*Հարցեր 1-6 - անցկացվում են դասախոսություններ:*

*Հարց 7 - ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են ինքնուրույն աշխատանքի ընթացքում:*

**ԹԵՄԱ 4. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ ՀԻՆ ՀՈՈՍՈՒՄ (2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար)**

1. Քաղաքական և իրավական գաղափարախոսության բնորոշ գծերը և հիմնական ուղղությունները Հին Հռոմում:

2. Ցիցերոնի քաղաքական և իրավական ըմբռումները: Նրա հայացքները պետության ծագման և էության մասին: Պետական կառավարման ձևերի դասակարգումը: Իրավունքի համակարգումը:

3. Հռոմեական ստոիկների քաղաքական և իրավական գաղափարները: Լ. Սենեկան՝ մեծ և

‘փոքր’ պետությունների և նրանց՝ մարդկանց անդամակցության մասին: Լ. Սենեկայի և Էպիկտետի բարոյական-մարդասիրական քարոզչությունը:

4. Հռոմեական իրավաբանների քաղաքական և իրավական գաղափարները: Հռոմեական իրավաբանները իրավունքի համակարգի և տեսակների մասին: Նրանց հայացքների ազդեցությունը իրավաբանական մտքի հետագա զարգացման ընթացքի վրա:

5. Քրիստոնեական հավատասմունքը որպես մարդկության հոգևոր և մտավոր վերածնության առիավատյա: Քրիստոնեության քաղաքական և իրավական գաղափարները: Նրանց լուսավորող և վերափոխիչ դերը: Հերետիկոսությունների առաջացումը և նպատակաուղղվածությունը:

6. Օգոստոսի քաղաքական և իրավական ուսմունքը: Ստրկության ինստիտուտի նրա մեկնաբանությունը: Օգոստոսը աշխարհիկ և հո՛ւնոր իշխանությունների փոխհարաբերության մասին:

*Հարցեր 1-6 - անցկացվում են դասախոսություններ:*

*Հարց 1-6-Ինքնուրույն աշխատանքի ընթացքում ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են թեմայի հիմնահարցերը:*

## **ԹԵՄԱ 5. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՖԵՈՂԱԼԻԶՄԻ ԾԱԳՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ**

(2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար)

1. Քրիստոնեության որպես պետական կրոնի հռչակումը Հայաստանում և Վրաստանում և հոգևոր ու մշակութային կյանքի աննախադեպ վերելքը:

2. Քաղաքական և իրավական գաղափարախոսությունը Հայաստանում: Քաղաքական և իրավական միտքը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում: Պետության ծա՛ման աստվածային և նահապետական տեսությունները. Մ. Մաշտոց և Մ. Խորենացի: Եզնիկ Կողբացիի մարդու կամքի ազատության և բարոյական պարտավորության մասին: Գահաժառանգման կար՛ի նրա ըմբռնումը: Դավիթ Անհաղթը որպես ինտելեկտուալ ընտրախավի ճաղափարախոս: Նրա կողմից օրենքի կար՛ավորիչ դերի պարզաբանումը: Պետական կառավարման միապետական ձևի հիմնավորումը Անանիա Շիրակացու կողմից: Պավլիկյան գաղափարախոսությունը:

2. Քաղաքական և իրավական միտքը զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում: Վերածննդի գաղափարախոսությանը բնորոշ արժեքների դրսևորումը հայ իրականությունում: Գրիգոր Նարեկացու բնաիրավական դիրքորոշումը: Տիրապետող ֆեոդալական հասարակական-քաղաքական համակարգի քննադատությունը: Մարդու մեջ աստվածայինը վերականգնելու ուղղությամբ աղերսի իմաստը: Նրա Մատյանը՝ որպես հասարակական բարեփոխումների, մարդկանց հոգևոր և մտավոր ազատության ապահովման և բարոյական ինքնակատարելա՛ործման յուրօրինակ ուղեցույց: Մխիթար Գոշի քաղաքական և իրավական հայացքները: Պետության ծա՛ման և էության հարցի ինքնատիպ ըմբռնումը: Մ. Գոշը որպես կենտրոնացված միապետության ջատագով: Պետության գերիշխանության մեկնաբանումը: Գահաժառանգման կարգի վերանայումը: Ստածողի բնաիրավական դիրքորոշումը: Օրինականության անշեղ կիրառման պահանջը: Սմբատ Սպարապետի պետական-իրավական հայացքները: Պետության էության վերաբերյալ աստվածային դրույթի իմաստը: Դասային ներկայացուցչության տարրերը Սմբատ Սպարապետի դատաստանա՛րքում: Գահաժառանգման կարգի վերանայումը: Գրիգոր Տաթևացու քաղաքական և իրավական հայացքները: Նրա դիրքորոշումը աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերության և ազդեցության շրջանակների մասին: պետական կառավարման միապետական ձևի հիմնավորումը: Օրենքների հասարակական դերի ընկալումը:

3. Քաղաքական և իրավական գաղափարախոսությունը Վրաստանում: Քաղաքական և

իրավական միտքը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում: Իսկովա Ծուրթավելու Շուշանիկի վարքի՝ հայրենասիրական և մարդասիրական նպատակաուղղվածությունը: Տղամարդկանց և կանանց հավասարության մասին դրույթը: Ազգային անկախության և պետության ամրապնդման ուղիքում քրիստոնեական հավատասունքի գաղափարական դերի ընդգծումը: Աէտի և Ֆարտադգի մտորումները Վրաստանի արտաքին քաղաքականության ուղղությամբ: Վասիլի Զարգվելու և Գեորգի Մերչուլեի հայացքները հոգևոր իշխանության առաջատար դերի մասին:

Քաղաքական և իրավական միտքը Վրաստանում զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում: Պետության և թափափոխական իշխանության աստվածային ծագման ու բնույթի մասին դրույթի առաջադրումը: Ուժեղ կենտրոնացված միապետության անհրաժեշտության հիմնավորումը: Լեոնտի Սրովելի, Դավիթ Շինարար, Թամար Թաուհի, Շոթա Ռուսթավելի: Լևոնտի Սրովելին կովկասյան ժողովուրդների ազակցության, նրանց միջև եղբայրական դաշինքի ապահովման և Վրաստանի քաղաքական միավորման վերաբերյալ: Դավիթ Շինարարի գերիշխանական ձեռնարկումները ռազմական, վարչաֆինանսական և արտաքին քաղաքականության բնագավառներում: Շոթա Ռուսթավելու լուսավորչալ միապետության գաղափարը: Նրա առաջադրած դրույթները գահաժառանգման կարգի, արդարացիության, բնական իրավունքի, տղամարդկանց և կանանց հավասարության, ժողովուրդների միջև բարեկամության վերաբերյալ: Կուտլու Արսլանի կենտրոնախույս ծրագիրը: Իշխանության համակարգում դասային ներկայացուցչությանը վճռական դեր հատկացնելու ուղղությամբ նրա ջանքերը:

4. Քաղաքական և իրավական գաղափարախոսությունը Աղվանքում: Մանիի ուսմունքը: Այն համաշխարհային գաղափարախոսություն հռչակելու մանեականների հավակնությունները: Լույսի (բարու) և խավարի (չարի) պայքարի մասին դրույթը: Մագդակիզմի էությունը և հասարակական-քաղաքական նպատակաուղղվածությունը: Աղվանքի մահմեդականացումը և դրա հետևանքները: Այսպես կոչված Մաքրության եղբայրների ընկերության Իխվան աւ-Սաֆաի գաղափարների տարածումը: Հասարակական կարգի նրանց ըմբռնումը: Պետական կառավարման ձևերի դասակարգումը: Ն.Գյանջևին պետության ծագման և էության մասին: Լուսավորչալ միապետության գաղափարը: Բդեալական հասարակարգի նախագիծը Իսկանդեր Նամեում: Նասիրադդին Տուսիի քաղաքական և իրավական հայացքները: Պետության ծափման և էության հարցը: Պետական կառավարման ձևերի դասակարգումը: Օրենքի հասարակական-քաղաքական դերի ընդգծումը:

*Հարցեր 1, 3-4 - անցկացվում են դասախոսություններ:*

*Հարց 2 - ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են ինքնուրույն աշխատանքի ընթացքում:*

**ԹԵՄԱ 6. ՔԱՂԱՔԱՎԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԵՆ ԱՍԻԱՅՈՒՄ ՖԵՈՂԱԼԻԶՄԻ ԾԱԳՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ**

(2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար )

1. Մագդակիզմի ծագումը և տարածումը: Նրա հասարակական-քաղաքական բովանդակությունը: Գույքային հավասարության հաստատման վերաբերյալ դրույթի առաջադրումը:

2. Ալ Ֆարաբիի Առաքինի քաղաքի բնակիչների հայացքների մասին՝ աշխատության նպատակաուղղվածությունը: Պետության ծագման պայմանագրային եղանակի և նրա էության, որպես հասարակական բարօրության ապահովման հիմնական գործոնի ըմբռնումը: Բռնապետության վճռական մերժումը:

3. Ֆեոդալական հասարակական-քաղաքական համակարգի քննադատությունը Ալիշեր Նավոյի կողմից: Լուսավորչալ միապետության գաղափարը:

*Հարցեր 1-3 - անցկացվում են դասախոսություններ:*

*Հարց 1-3-Ինքնուրույն աշխատանքի ընթացքում ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են թեմայի հիմնահարցերը:*

**ԹԵՄԱ 7. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ ԱՐԱՔԱԿԱՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ՖԵՆՈՂԱԼԻԶՄԻ ԾԱԳՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ**

(1 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար )

1. Իսլամի ծագումը և էությունը: Նրա հիմնական ուղղությունները և աղանդները. Սունա և շիա, խարիջիտներ և իսմաիլիտներ:

2. Մուսուլմանական իրավունքի զարգացման առանձնահատկությունները: Պետության մուսուլմանական իրավական կանխադրույթի ընդհանուր բնութագիրը:

3. Աբու Լա-լա Մահարու առաջադիմական հայացքները: Ժողովրդաիշխանության նրա ըմբռնումը:

4. Իբն Բաջուի իդեալական հասարակարժի նախագիծը: Իբն Խալդունը պետության ծագման և էության, նրա զարգացման փուլերի մասին: Պետության կառավարման միապետական ձևի հիմնավորումը:

5. Ալ-Աֆգանիի բարենորոգչական նկատառումները: Սահմանադրական միապետական համակարգի առավելությունների հիմնավորումը: Ժողովրդի գերիշխանության գաղափարը: Շարիաթի դերի գերազնահատումը:

*Հարցեր 1-5 - անցկացվում են դասախոսություններ:*

*Հարց 1-5-Ինքնուրույն աշխատանքի ընթացքում ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են թեմայի հիմնահարցերը:*

**ԹԵՄԱ 8. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ՖԵՆՈՂԱԼԻԶՄԻ ԾԱԳՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ X-XVIII Դ.**

(2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար )

1. Քաղաքական և իրավական գաղափարախոսությունը Ռուսաստանում X-XVII դդ.: Ռուսական պետության անկախության գաղափարը: Քրիստոնեության որպես պետական կրոնի հռչակումը: Տարեգրություններում և հին ռուսական իրավունքի հուշարձաններում արտահայտված քաղաքական-իրավական գաղափարները:

2. Քաղաքական մտքի հիմնական ուղղությունները և նրանց միջև պայքարը՝ ռուսական կենտրոնացված պետության կազմավորման ժամանակաշրջանում: Սիմոն Սուզդալացու քաղաքական հայացքները: Մոսկվան երրորդ Հռոմն է՝ տեսության էությունը և նշանակությունը: Իշխան Կուրբսկին որպես լուսավորյալ միապետության ջատաճով: Իոսիֆյանների քաղաքական յաղափարախոսությունը: Պերեսվետովի ուսմունքը ցարական իշխանության ինքնակալական բնույթի և նրա ամրապնդման միջոցների մասին:

3. Քաղաքական և իրավական գաղափարախոսությունը Ռուսաստանում Բացարձակ միապետության կազմավորման և ամրապնդման ժամանակաշրջանում /XVII դ. երկրորդ կեսի – XVIII դ. առաջին կես: Բացարձակ միապետության տեսական հիմնավորումը Ֆ. Պրոկոպովիչի և Վ. Տատիշչևի կողմից: Պրոկոպովիչը պետության ծագման և ձևերի մասին: Կախվածության երեք ձևերի տատիշչևյան ըմբռնումը: Պոսոլկովի վաղ բուրժուական ըմբռնումները: Պետական բարեփոխումների ծրագիրը:

*Հարցեր 1-2 - անցկացվում են դասախոսություններ:*

*Հարց 3 - ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են ինքնուրույն աշխատանքի ընթացքում:*

**ԹԵՄԱ 9. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԻՍՍՈՒՆՔՆԵՐԸ ԱՐԵՎՍՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ՖԵՈՂԱԼԻԶՄԻ ՔԱՅՔԱՅՄԱՆ ՄԿՋԲՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆՈՒՄ**

(2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար )

1. Վերածննդի քաղաքական գաղափարախոսության ընդհանուր բնութագիրը: Բուրժուական քաղաքական-իրավական գաղափարախոսության ձևավորումը: Իրավաբանական աշխարհայեցողության տարածումը:

2. Մաքիավելոու ուսմունքը պետության և իրավունքի մասին: Նրա քաղաքական հավատամքը: Մաքիավելին պետության էության և ձևերի, քաղաքականության խնդիրների և եղանակների մասին: Ուժեղ կառավարչի նրա տիպարը:

3. Ռեֆորմացիայի՝ քաղաքական և իրավական գաղափարները և հիմնական ուղղությունները: Մարտին Լյութերի չափավոր բարեփոխումների ծրագիրը: Թոմաս Մյունցերը որպես գյուղացիական-պլեբեյական ռեֆորմացիայի գաղափարախոս և նրա առաջադիմական պետական-իրավական հայացքները:

4. Ուտոպիստական-կոմունիստական գաղափարախոսության որպես ամբողջական համակարգի ձևավորումը XVI դ.: Թ. Մորի և Թ. Կամպանելայի առաջադրած իդեալական հասարակարգերի նախագծերը:

5. Ժան Բոդենի ուսմունքը պետության և իրավունքի մասին: Նրա գերիշխանության տեսությունը: Պետական կառավարման ձևերի դասակարգումը: Բացարձակ միապետի իշխանության սահմանները:

*Հարցեր 1-2, 4-5 - անցկացվում են դասախոսություններ:*

*Հարց 3 - ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են ինքնուրույն աշխատանքի ընթացքում:*

**ԹԵՄԱ 10. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԻՍՍՈՒՆՔՆԵՐԸ ՀՈԼԱՆԴԻԱՅՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ ՎԱՂ ԲՈՒՐՇՈՒԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆՈՒՄ**

(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար )

1. Վաղ բուրժուական հեղափոխությունների առանձնահատկությունները և դրանց արտացոլումը քաղաքական-իրավական գաղափարախոսությունում: Բուրժուազիայի իրավաբանական աշխարհայեցողության զարգացումը: Բնական իրավունքի տեսության որպես համակարգված գաղափարախոսության ընդհանուր բնութագիրը:

2. Քաղաքական և իրավական ուսմունքները Հոլանդիայում 17-րդ դ.: Հուգո Հրացիոսը որպես հոլանդական բուրժուազիայի գաղափարախոս: Նրա ուսմունքը պետության և իրավունքի մասին: Հուգո Հրացիոսի բնական իրավունքի տեսության առանձնահատկությունները: Պետության ծագման և էության հարցը: Գերիշխանության հասկացությունը: Մտածողի միջազգային-իրավական հայացքները: Բնական իրավունքի գաղափարախոսության զարգացումը Բ. Սպինոզայի կողմից: Նրա ըմբռնումները պետության ծագման և խնդիրների մասին: Քաղաքացիների անօտարելի իրավունքների գաղափարը: Պետական կառավարման ձևերի հարցը:

3. Քաղաքական և իրավական գաղափարախոսության հիմնական ուղղությունները 17-րդ դ. անգլիական հեղափոխության ժամանակաշրջանում:

Թոմաս Հոբսի քաղաքական և իրավական ուսմունքը: Բնական իրավունքի և պետության ծագման պայմանագրային տեսության ուղղությամբ նրա ինքնատիպ դիրքորոշումը: Թոմաս Հոբսը պետության էության և ձևերի, պետական գերիշխանության մասին: Հոբսի քաղաքական իդեալը:

Ինտեպետենդների քաղաքական-իրավական գաղափարախոսությունը: Դ. Միլտոնի և Օ. Սիդնեյի պետական-իրավական հայացքները: Բուրժուա-դեմոկրատական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

Լևելներն են քաղաքական և իրավական գաղափարախոսությունը: Ջոն Լիբերը բնական իրավունքների մասին: Ժողովրդական գերիշխանության նրա ինքնատիպ ընկալումը: Պետական իշխանության կազմակերպման վերաբերյալ հայացքները: Ջ. Լիբերը օրինականության մասին:

Դիզգերների քաղաքական և իրավական գաղափարները: Ջ. Ուինստենլին քաղաքական-իրավական համակարգի վերակառուցման ուղիների մասին: Նրա սահմանադրական նախագծի տեսական արժեքը:

4. Ջ. Լոկկի քաղաքական և իրավական ուսմունքը: Նրա ըմբռնումները բնական իրավունքի հիմնական պահանջների, քաղաքական իշխանության բնույթի և ինդիվիդուների վերաբերյալ: Պետական կառավարման ձևի հարցը: Իշխանությունների բաժանման տեսությունը:

*Հարցեր 2-4 - անցկացվում են դասախոսություններ:*

*Հարց 1 - ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են ինքնուրույն աշխատանքի ընթացքում:*

**ԹԵՄԱ 11. XVII-XVIII ԴԴ. ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՏԱԼԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐԻՉՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ**

(2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար)

1. Գերմանական լուսավորչականության չափավոր և արմատական ուղղությունները: Բնական իրավունքի պուֆենդորֆյան ըմբռնումը: Պետության ծագման գործում աստվածային կամքի և մարդկային գործունեության համատեղումը: Պետության հիմքը կազմող պայմանագրի և կառավարման ձևը սահմանող որոշման տարբերակումը:

Խ. Վոլֆի պետական-իրավական հայացքները: Պետության ծագման և էության հարցը: Լուսավորչալ և ոստիկանական միապետություններին բնորոշ հատկանիշների համատեղման նրա ձգտումը: Բնական և դրական օրենքների հարաբերակցության ըմբռնումը:

2. Քաղաքական և իրավական ուսմունքները Իտալիայում XVIII դ.: Ջ. Վիկոն պատմության ընթացքի օբյեկտիվ բնույթի մասին: Հասարակության զարգացման փուլերի հարցը: Պետության կազմավորման ընթացքի ինքնատիպ ըմբռնումը: Պետական կառավարման ձևերի բնութագրումը: Զ. Բեկարիան պետության ծագման և էության մասին: Ֆեոդալական դասային կարգի մերժումը: Հասարակական անարդարացիության նյութական հիմքի ըմբռնումը: Լուսավորչալ միապետության հիմնավորումը: Օրինականության և արդարության երաշխավորման պահանջը:

*Հարցեր 1.2 - անցկացվում են դասախոսություններ:*

*Հարց 1-2-Ինքնուրույն աշխատանքի ընթացքում ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են թեմայի հիմնահարցերը:*

**ԹԵՄԱ 12. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ՖԵՈՂԱԼԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՃԳՆԱԺԱՄԻ ԵՎ ԲՈՒՐժՈՒԱԿԱՆ ՀԵՂԱՓՈՒՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ XVIII Դ.**

(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Քաղաքական-իրավական գաղափարախոսության հիմնական ուղղությունները: Լուսավորչականության ընդհանուր բնութագիրը:

2. Վոլտերի քաղաքական-իրավական հայացքները: Վոլտերի քաղաքական ձևի իդեալը:

3. Շ. Մոնտեսքյոյի ուսմունքը պետության և իրավունքի մասին: Աշխարհաօրական միջավայրի և օրենսդրության դերի նրա ընկալումը: Պետական կառավարման ձևերի դասակարգումը: Իշխանության տարանջատման տեսության առանձնահատկությունները և նպատակաուղղվածությունը:

4. Ֆրանսիական մատերիալիստների (Դ. Դիդրո, Կ. Հելվեցիոս, Պ. Հոլբախ) քաղաքական-իրավական գաղափարները: Հելվեցիոսը հասարակական-քաղաքական միջավայրի և

օրենսդրության դերի վերաբերյալ: Ֆրանսիական մատերիալիստների հայացքները պետության ձևերի մասին:

5. Ժան-ժակ Ռուսոյի քաղաքական և իրավական ուսմունքը: Ռուսոն հասարակական անհավասարության պատճառների, պետության ծափան և էության մասին: Մտածողի հասարակական դաշինքի տեսության առանձնահատկությունները: Ժողովրդական ինքնիշխանության նրա ընկալումը: Ընդհանուր կամք՝ և բոլորի կամք՝ հասկացությունների իմաստը: Պետության ձևերի և կառավարության ձևերի տարբերակումը: Հասարակական-քաղաքական համակարգի նրա իդեալը: Ռուսոյի իրավական հայացքները:

6. Ուտոպիական սոցիալիզմի (Մեյլե, Մորելի, Մաբլի) քաղաքական և իրավական գաղափարները:

7. Քաղաքական-իրավական մտքի հիմնական ուղղությունները ֆրանսիական բուրժուական Մեծ հեղափոխության ժամանակաշրջանում. սահմանադրականներ, ժիրոնդիստներ, յակոբինյաններ: Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի՝ և սահմանադրության տեսական արժեքը:

*Հարցեր 1-5 - անցկացվում են դասախոսություններ:*

*Հարց 6-7 - ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են ինքնուրույն աշխատանքի ընթացքում:*

### **ԹԵՄԱ 13. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ ԱՄՆ-ՈՒՄ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ**

(2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար)

1. Անկախության համար մղվող պատերազմը և քաղաքական գաղափարախոսության հիմնական ուղղությունները:

2. Ֆեդերալիստների՝ քաղաքական հայացքները և նրանց արտացոլումը Համիլտոնի ուսմունքում: Համիլտոնը իշխանությունների բաժանման՝ և նրա գործնական իրագործման մասին:

3. Ջեֆֆերսոնի քաղաքական հայացքները և նրանց արտացոլումը՝ Անկախության հռչակագրում՝ և Իրավունքների մասին Բիլում: Հեղափոխության օրինաչափության և դեմոկրատական հանրապետության անհրաժեշտության հիմնավորումը: Ստրկության վճռական մերժումը:

4. Համիլտոնը և Ջեֆֆերսոնը հասարակության և պետության ներքին և արտաքին անվտանգության երաշխիքների մասին:

5. Թ. Պեյնի քաղաքական հայացքները: Նրա՝ Բնական իրավունքի՝ տեսությունը: Ստրկության ինստիտուտի մերժումը: Նրա դիրքորոշումը պետական կառավարման ձևերի վերաբերյալ:

6. ԱՄՆ-ի 1787 թ. Սահմանադրության գործնական և տեսական արժեքը:

*Հարցեր 1-5 - անցկացվում են դասախոսություններ:*

*Հարց 6 - ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են ինքնուրույն աշխատանքի ընթացքում:*

### **ԹԵՄԱ 14. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ՖԵՈՂԱՆԱԿԱՆ-ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՔԱՅՔԱՅՄԱՆ ԵՎ ՃԳՆԱԺԱՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ**

(2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար)

1. Դասակարգային պայքարի և քաղաքական գաղափարախոսության հիմնական ուղղությունները:

2. Ազնվականության քաղաքական ծրագիրը: Եկատերինա Երկրորդի՝ Նակագի՝

ինքնակալական և ճորտատիրական բնույթը: Ինքնակալությունը սահմանափակելու շջերբատովյան հետադիմական դիրքորոշումը:

3. Ռուս լուսավորչականները: Նրանց քաղաքական ծրագրի առանձնահատկությունները: Ս. Դեսնիցկին հասարակության զարգացման փուլերի մասին: Պետության ծագման և էության հարցը: Պետական բարեփոխումների ծրագիրը: Ճորտատիրական իրավունքի մերժումը:

4. XVIII դ. գյուղացիական ապստամբությունների քաղաքական նպատակառոտվածությունը:

5. Ա. Ռադիշչևի ինքնատիպ բնաիրավական տեսությունը: Բացարձակ միապետության և ճորտատիրության քննադատությունը: Ժողովրդական հեղափոխության հիմնավորումը: Ապագա հասարակական-քաղաքական համակարգի կառուցման ծրագիրը:

*Հարցեր 1-5 - անցկացվում են դասախոսություններ:*

*Հարց 1-5-Ինքնություն աշխատանքի ընթացքում ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են թեմայի հիմնահարցերը:*

**ԹԵՄԱ 15. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԻՍՄՈՒՆՔՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ (XVIII Դ. ՎԵՐՁ - XIX Դ. ՄԿԻՋԲ)**

(2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար)

1. Գերմանական դասական իմաստասերների քաղաքական ու իրավական ուսմունքները: Ի. Կանտի ուսմունքը պետության և իրավունքի մասին: Պետական կառավարման ձևերի Կանտյան դասակարգման չափանիշները: Նրա դատողությունները բարոյականության և իրավունքի մասին: Իրավական պետության տեսական հիմնավորումը: Պետության խնդիրների շրջանակը: Հավերժական խաղաղության նախագիծը:

2. Ի. Ֆիհտեի պետական-իրավական հայացքների ձևավորման և զարգացման ընթացքը: Ժողովրդի ինքնիշխանության հիմնավորումը: Արմատական հեղափոխությունից անցումը աստիճանական բարեփոխումների, լուսավորչականության դիրքերը: Իդեալական պետության նրա ըմբռնումը: Պայքարը ներպետական և միջպետական բնագավառներում ամեն մի բռնության դեմ:

2. Իրավունքի պատմական դպրոցը: Հուգոյի, Սավինիի և Պուխտայի կողմից բնաիրավական հայեցակարգի քննադատությունը: Իրավունքի համեմատումը լեզվի հետ: Իրավունքի ստեղծման գործում օրենսդիր իշխանության սոսկ օժանդակող դերի ընդունումը:

3. Հեգելի դերը իմաստասիրության զարգացման գործում: Դիալեկտիկայի օրենքների բացահայտումը: Նրա պետական-իրավական ըմբռնումները: Իրավունքի փիլիսոփայության տեսական արժեքը: Վերացական իրավունքի, բարոյականության և բարոյականության հասկացությունները: Հեգելը քաղաքացիական հասարակության և պետության փոխհարաբերության մասին: Սահմանադրական միապետության գաղափարի հիմնավորումը: Հեգելը պատերազմի և խաղաղության, բնական և դրական իրավունքների մասին:

*Հարցեր 1-3 - անցկացվում են դասախոսություններ:*

*Հարց 1-3-Ինքնություն աշխատանքի ընթացքում ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են թեմայի հիմնահարցերը:*

**ԹԵՄԱ 16. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՄԻՏՔԸ ՌՈՒՍԱՍՏՈՒՄ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍՈՒՄ**

(2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար )

1. Ֆեոդալիզմի հետագա քայքայումը Ռուսաստանում, դասակարգային պայքարի առանձնահատկությունները և դրանց արտացոլումը քաղաքական և իրավական

գաղափարախոսությունում:

2. Ազատականության ազնվականական և բուրժուական դրսևորումները XIX դ. առաջին կեսում: Մ. Սպերանսկու քաղաքական-իրավական հայացքները: Պետական վերափոխումների նախագծերը և օրենսդրության համակարգումը: Սահմանադրական միապետության հիմնավորումը: Իշխանությունների տարանջատման և համատեղման գաղափարը: Ճորտատիրական իրավունքի աստիճանական վերացման նրա առաջարկած տարբերակը:

Ն. Կարամազինի քաղաքական-իրավական հայացքները: Նրա մոտեցումները պետական կառավարման ձևերի, քաղաքական ռեժիմների և օրենքների բովանդակության վերաբերյալ: Բռնապետական համակարգի մերժումը և լուսավորյալ, բարոյական, ուժեղ-կենտրոնացված միապետության հիմնավորումը: Իշխանությունների տարանջատման սկզբունքի քննադատությունը: Հոգուտ ճորտատիրական իրավունքի պահպանման նրա փաստարկները:

3. Ռուսական ազատաբանական, հայրենասիրական շարժման և Գաղափարախոսության ընդհանուր բնութագիրը: Դեկաբրիստների քաղաքական և իրավական գաղափարախոսությունը: Նրա հիմնական ուղղությունները: Պետական և իրավական համակարգի վերափոխման նախագիծը Պեստելի Ռուսական Պրավդայում: Օրենսդիր և Կործակիչ մարմինների լիազորությունների սահմանազատումը: Օրենքների դասակարգումը:

Ն. Մուրավյովի սահմանադրական նախագծերը: Սահմանադրական միապետության և պետական կառուցվածքի դաշնային ձևի նրա ըմբռնումը:

Լուսավորիչների քաղաքական-իրավական գաղափարները: Պ. Չադանի դատողությունները Ռուսաստանի զարգացման ընթացքի, հետամնացության հաղթահարման և առաջադիմության ապահովման ուղղությամբ:

4. Արևմտականների և սլավոնասերների գաղափարական դիրքորոշումները Ռուսաստանի հասարակական-քաղաքական համակարգի բարեփոխման ուղիների վերաբերյալ:

*Հարցեր 1-2 - անցկացվում են դասախոսություններ:*

*Հարց 3-4 - ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են ինքնուրույն աշխատանքի ընթացքում:*

**ԹԵՄԱ 17. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԻՍՍՈՒԼՔՆԵՐԸ ԱՐԵՎՍՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍՈՒՄ**

(2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար )

1. Արևմտավերոպական բուրժուական քաղաքական-իրավական գաղափարախոսության հիմնական ուղղությունները: Անգլիական ազատականության էությունը: Ի. Բենտամի պատկերացումը մարդու գործունեության էության մասին. բավարարվածություն ստանալու և տառապանքներից խուսափելու ձգտումը, օգտակարությունը և բարեգործությունը, ինչպես նաև անհատական ու հասարակական շահերի ներդաշնակումը: Միապետական, արխատոկրատական կառավարման ձևերի մերժումը և ժողովրդավարության տեսական հիմնավորումը:

Անհատի ազատության գաղափարի ըմբռնումը Ջ. Միլլի կողմից: Ներկայացուցչական համակարգի և իշխանությունների տարանջատման գաղափարի հիմնավորումը: Նրա ժողովրդավարական-իրավական դրույթները:

Ֆրանսիական ազատականների հայացքները: Բ. Կոնստանի քաղաքական ուսմունքը: Հասարակական զարգացման փուլերի, քաղաքական և քաղաքացիական ազատությունների նրա տարբերակումը: Սահմանադրական միապետության հիմնավորումը: Կոնստանի՝ իշխանությունների տարանջատման տեսության առանձնահատկությունները:

Ալեքսիս դե Թոքվիլի պետական-իրավական հայացքները: Ազատության և

հավասարության նրա ըմբռնումը: Թոքվիլը ժողովրդավարության էության, բովանդակության և նրա ապահովման երաշխիքների մասին:

Գերմանական ազատականության ներկայացուցիչ Լ. Շտեյնի պետական-իրավական հայացքները: Սահմանադրական միապետական համակարգում իրավական պետության սկզբունքների ապահովման երաշխիքները: Օրենսդիր և յործադիր իշխանությունների հարաբերակցությունը: Պետության դերը՝ հասարակական բարեփոխումների իրականացման՝ արատների վերացման, մարդկանց բարոյական, հոգևոր դաստիարակման ուղղությամբ:

2. Սոցիալիզմի գաղափարախոսների պետական-իրավական հայացքները Մեն-Սիմոնի, Շ. Ֆուրյեի և Ռ. Օուենի քաղաքական-իրավական գաղափարների ընդհանուր բնութագիրը: Մեն-Սիմոնը մարդկային հասարակության զարգացման փուլերի, հասարակության դասակարգային կառուցվածքի և պետության էության վերաբերյալ: Նրա տեսակետը պետական իշխանության կազմակերպման և խնդիրների, ֆեոդալական համակարգից՝ արդյունաբերական համակարգին անցնելու անհրաժեշտության մասին: Շ. Ֆուրյեի հայացքները պետության և իրավունքի մասին: Հասարակական-քաղաքական համակարգի զարգացման նրա ընկալումը: Կապիտալիստական հասարակարգի, բուրժուական պետության և իրավունքի քննադատությունը: Ֆալանգներն իբրև նոր հասարակարգի կազմակերպման ձև, հասարակության բոլոր խավերի շահերի համատեղման և երաշխավորման գրավական:

Ռ. Օուենի հայացքները պետության և իրավունքի մասին: Հասարակական միջավայրի և մարդու բնույթի փոխկախվածությունը: Նրա դիրքորոշումը քաղաքական պայքարի ձևերի և մեթոդների նկատմամբ: Մասնավոր սեփականության մերժումը և հասարակական սեփականատիրական համակարգի անհրաժեշտության հիմնավորումը: Նոր հասարակարգի սահմանադրական նախագծերը:

3. Օգյուստ Կոնթի քաղաքական-իրավական ուսմունքը: Նրա Պոզիտիվիստական իմաստասիրության սկզբունքները: Օ. Կոնթը հասարակության զարգացման փուլերի, նյութական և հոգևոր իշխանությունների փոխհարաբերության վերաբերյալ: Սոցիոկրատիայի նախագիծը: Հասարակական համերաշխության գաղափարը: Օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունքների կոնյան ընկալումը և մեկնաբանումը:

*Հարցեր 1-3 - անցկացվում են դասախոսություններ:*

*Հարց 1-3-ինքնուրույն աշխատանքի ընթացքում ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են թեմայի հիմնահարցերը:*

## **ԹԵՄԱ 18. ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԸ**

### **(1 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար )**

1. Մարքսիզմի ծագումը: Նրա առաջացման օբյեկտիվ հասարակական-պատմական արմատները և տեսական աղբյուրները: Մարքսիզմը որպես իմաստասիրական, հասարակական, տնտեսագիտական և քաղաքական որոշակի գաղափարների համակարգ:

2. Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի կողմից պետության և իրավունքի պատմամատերիալիստական ելակետի առաջադրումը: Պետության և իրավունքի ընկալումն իբրև հասարակական-տնտեսական բազիսով պայմանավորված վերնաշենքային երևույթներ:

3. Պետության և իրավունքի էության դասակարգային հայեցակարգի մշակումը: Պետության՝ որպես տնտեսապես իշխող դասակարգի, կողմից հակառակորդ դասակարգի նկատմամբ հետևողական հարկադրանքի կիրառման կազմակերպության և իրավունքի՝ իբրև տիրող դասակարգի օրինականացված կամքի բնութագրումը:

4. Սոցիալիստական հեղափոխության և պրոլետարիատի դիկտատուրայի հիմնահարցը: Նրա առաջադրումը և բացահայտումը Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի 'Գերմանական գաղափարախոսություն', 'Կոմունիստական կուսակցության մանիֆեստը' և Կ. Մարքսի 'Դասակարգային պայքարը ֆրանսիայում' աշխատություններում: Մանիֆեստը՝ որպես բանվոր դասակարգի պայքարի ծրագիր: Բուրժուական և պրոլետարական հեղափոխությունների,

կապիտալիստական և սոցիալիստական համակարգերի տարբերակումը: Անընդհատ հեղափոխության գաղափարը: Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ընկալումը: Փարիզի Կոմունայի փորձի ընդհանրացումը: Նրա բնութագրումը իբրև բանվոր դասակարգի դիկտատուրայի գործուն օրինակ, որոշակի ձև:

5. Անդասակարգ կոմունիստական հասարակարգի կառուցման և պետության ու իրավունքի աստիճանական մահացման գաղափարը: Անցումը կապիտալիզմից սոցիալիզմին և սոցիալիզմից՝ կոմունիզմին: Պրոլետարիատի դիկտատուրայի նպատակը և խնդիրները: Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի առաջադրած դրույթները՝ սոցիալիզմի պայմաններում պրոլետարիատի դիկտատուրայի սպառման, իսկ կոմունիստական ֆորմացիայում պետության մահացման վերաբերյալ: Պետության ծափման և էության, նրա առաջացման ուղիների և հիմնական հատկանիշների, ինչպես նաև մահացման վերաբերյալ հարցադրումները Ֆ. Էնգելսի Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը՝ աշխատությունում: Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի պայքարը պրոլետնիզմի դեմ բանվորների միջազգային ընկերության (1-ին ինտերնացիոնալի) կոնգրեսներում: Պետության և իրավունքի հարցերը 1-ին ինտերնացիոնալի փաստաթղթերում:

6. Մանրբուրժուական սոցիալիստական և անարխիստական հոսանքների՝ պրոլոնականների, բակունինականների և լասալականների քննադատությունը Կ. Մարքսի Գոթայի ծրագրի քննադատությունը, Ֆ. Էնգելսի Բակունինականները հանուն աշխատանքի և Հեղինակության մասին աշխատություններում: Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի կողմից բուրժուական համակարգի պայմաններում իրավական պետության հնարավորության, ժողովրդավարության ապահովման գործում իշխանությունների տարանջատման, բազմակուսակցականության և բազմակարծիքության էական դերի անտեսումը:

*Հարցեր 1-4 - անցկացվում են դասախոսություններ:*

*Հարց 5-6 - ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են ինքնուրույն աշխատանքի ընթացքում:*

## **ԹԵՄԱ 19. XIX Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ**

### **ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՄԻՏՔԸ**

#### **(2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար )**

1. Քննարկվող ժամանակաշրջանի քաղաքական-իրավական գաղափարախոսության բնորոշ գծերը:

2. Ռ. Հիերինգի ուսմունքը պետության և իրավունքի մասին: Ռ. Հիերինգի ստեղծաործական զարացման փուլերը: Նրա կողմից իրավունքի դերի և ֆունկցիայի կարևորումը որպես միասնական շահերով միավորված մարդկանց համատեղ յործունեության բնագավառի կարգավորիչ: Իրավունքի բնութաբոլումը որպես պետության յործունեության արդյունք, որպես որոշակի նորմերի, համապարտադիր վարքա՝ծի կանոնների համակցում: Պետության, որպես հասարակական հարկադրանքի կազմակերպության հիերինգյան բնութագրումը: Պետության և իրավունքի փոխհարաբերության զարացման ընթացքը՝ հոգուտ երկրորդի:

2. Լ. Գումպլովիչի պետության մասին սոցիոլոգիական տեսությունը: Հասարակության զարգացման գործում ռասաների, հասարակական տարբեր խավերի պայքարի, թույլերի նկատմամբ ուժեղների տիրապետության հաստատման որոշիչ նշանակության ընդգծումը: Պետության՝ որպես այդ պայքարի հետևանքի և թույլերի նկատմամբ ուժեղների իշխանության ապահովման, կազմակերպված ձևի բնութագրումը: Պետության դերի գերազնահատումը ինչպես մարդկային հասարակության գոյության, այնպես էլ իրավունքի ձևավորման տեսանկյունից: Մարդկանց անօտարելի իրավունքների անտեսումը:

3. 2. Սպենսերի քաղաքական գաղափարները: Սպենսերի կողմից կենսաբանական չափանիշների կիրառումը հասարակական-քաղաքական երևույթները բացատրելիս: Հասարակության և անհատի փոխհարաբերության ըմբռնումը: Հասարակական-տնտեսական ֆորմացիաների և պետության տիպերի դասակարգման նրա առաջարկած տարբերակը: Քաղաքակրթական գործոնի կարևոր դերը հասարակության առաջընթացի, հանրության ձևերի

կատարելագործման, պետության ներքին և արտաքին քաղաքականության իրականացման գործում:

4. Ֆ. Նիցշեի քաղաքական-իրավական ուսմունքը: Հասարակական քաղաքական համակարգի կազմակերպման և կատարելագործման գործընթացի հիմքերը, նպատակը: Ուժեղների կամքի և թույլերի կամքի բնութագրումներն իբրև վերելքի և վայրէջքի, իբրև ազնվագարմերի և խաժամուժի իշխանության հատկանիշի: Հասարակության մեջ միայն առանձին անհատներն են (Նապոլեոն, Կեսար և այլն) օժտված ծառայելու մեծ նպատակին, առաջ մղելու պատմությունը: Պետությունն ըստ նրա ուժեղի կողմից թույլերի նկատմամբ տիրապետություն հաստատելու արդյունք է և մարմնավորում: Պետական կառավարման արհեստակրատական և դեմոկրատական ձևերի բնութաբանումը: Բնական իրավունքի մերժումը ուժեղի կամքի հիմնավորումով: Իրավունքի բնութաբանումը որպես հանուն իշխանության կամքի դրսևորման հետևանք, որպես պատերազմի և հաղթանակի արդյունք:

*Հարցեր 1-3 - անցկացվում են դասախոսություններ:*

*Հարց 4 - ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են ինքնուրույն աշխատանքի ընթացքում:*

**ԹԵՄԱ 20. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԻՍՄՈՒՆՔՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ XIX Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՄԻՑ XX Դ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍԸ**

(2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար )

1. Քաղաքական և իրավական գաղափարախոսության բնորոշ գծերը և հիմնական ուղղությունները:

2. Բարենորոգիչները: Ալեքսանդր Երկրորդի մտորումները գոյություն ունեցող հասարակական-քաղաքական համակարգի անշեղ պահպանման՝ ազնվականության շահերի երաշխավորման պայմաններում գյուղացիության դրության բարելավման ուղղությամբ: Գյուղացիական հարցի լուծման նպատակով կազմված նախագծերը:

Ն. Մերնո-Սոլովյովիչի հասարակական-քաղաքական համակարգի բարենորոգման ծրագիրը: Մտածողի առաջադրած դրույթները՝ ճորտատիրական իրավունքի վերացման, հասարակական-քաղաքական ազատությունների սահմանման, գործադիր և դատական իշխանությունների իրավասությունների ճշգրտման ուղղությամբ: Նրա նկատառումները՝ համայնական սեփականության պահպանման և ամրապնդման վերաբերյալ:

Ալեքսեյ Ունկովսկու ծրագիրը գյուղացիական հարցի լուծման ուղղությամբ: Նրա դատողությունները՝ ազնվականության և գյուղացիության փոխհարաբերության կարգավորման մասին: Սեփականության իրավունքի ստորադասումը՝ մարդկանց կյանքի, նրանց բնական ազատ գործունեության իրավունքներին և պետական շահերի պաշտպանության նպատակներին:

Միտրոպոլիտ Ֆիլարետի (1782-1867 թթ.) բացասական վերաբերմունքը քաղաքական ողջ համակարգի՝ բուրժուական սկզբունքներով վերակառուցման ուղղությամբ, ժառանգական, բացարձակ ինքնակալության տեսական հիմնավորումը: Դրա հետ միասին ընտրովիության սկզբունքով դատական մարմինների կազմակերպման անհրաժեշտության ընդունումը: Նրա դատողությունները՝ արդարության, օրինականության, յուրաքանչյուրի և բոլորի անվտանգության պահպանման երաշխիքների, տիրակալի և պետության փոխհարաբերության կատարելաործման վերաբերյալ:

2. Արմատականներ: Ռուսական ուտոպիստական սոցիալիզմի առանձնահատկությունները: Ա. Գերցենի և Ն. Չերնիշևսկու հայացքների ընդհանրությունները և տարբերիչ գծերը: Նրանց կողմից Ֆեոդալական-ճորտատիրական կարգերի մերժմանը զուգընթաց բուրժուական հասարակության արատավոր կողմերի քննադատությունը: Նոր, արդարացի համակարգի կառուցման գործում գյուղական համայնքի ունենալիք դերի գերազանահատումը:

Ա. Գերցենի երկրնորանքը՝ ճորտատիրական իրավունքի վերացման, հողային հարցի լուծման, արդարացի հասարակական-քաղաքական համակարգի ստեղծման ուղիների

վերաբերյալ: Նրա կողմից մարդկային հանրակեցության կազմակերպության ձևերի դասակարգումը, քաղաքական հանրապետության համեմատությամբ՝ հասարակական հանրապետության առավելությունների ընդգծումը: Ճորտատիրական համակարգի վերացման և սոցիալիստական կարգերի հաստատման համաժողովրդական հեղափոխական ուղու հետևողական կողմնակից: Նրա դատողությունները բյուրոկրատական ճնշումից ազատ, օրենքների վրա հիմնված, համապետական ներկայացուցչական և տեղական ինքնակառավարման, ինչպես նաև ինքնուրույն և արդարացի դատարանի ստեղծման մասին:

Հասարակական-տնտեսական և քաղաքական համակարգի վերափոխման նրա անարխիստական դիրքորոշումը: Բնական և մարդկային օրենքների փաստարկումով իրավաբանական, քաղաքական օրենքների ու պետության մերժումը: Ազատության և համամարդկային իրավունքի ապահովման հասարակական-քաղաքական երաշխիքները: Ազատության և սոցիալիզմի, հասարակական և քաղաքական հեղափոխությունների բախումինյան ըմբռնումը:

Պ. Լավրովի (1823-1900 թթ.) դրական դիրքորոշումը ժողովրդին քաղաքականապես դաստիարակելու, հեղափոխությունը նախապատրաստելու և նրա կողմից հեղափոխությունն իրականացնելու ուղղությամբ: Հասարակության և պետության տարբերակումը: Հին պետական մեքենայի նկատմամբ սոցիալիստական հեղափոխության դիրքորոշումը:

3. Ազատականներ: Ազատականության հակահինքնակալական և հակաճորտատիրական դիրքորոշումը: Պայքարն ամենաթողության և բռնության դեմ: Անհատի արժանապատիվ գոյության իրավունքի հիմնավորումը: Բ. Չիչերինի (1828-1904) քաղաքական-իրավական հայացքները: Ազատականության տարբեր ուղղությունների դասակարգումը. փողոցային, ընդդիմադիր և պահպանող տեսակների ու նրանց բնութագրումը: Պետության էության և նրա հիմնական խնդիրների ընկալումը: Տեղական ինքնակառավարման ընտրովի համակարգի կարևորումը: Ազատության և իրավունքի, բնական և դրական իրավունքների, մարդկանց իրավունքների և պարտականությունների հարաբերակցությունը: Մտածողի դատողությունները՝ պետության և անհատի փոխհարաբերության, մարդկանց անօտարելի իրավունքների վերաբերյալ:

Մ. Կովալևսկու պետական-իրավական հայացքները: Մ. Կովալևսկին որպես պոզիտիվիստական սոցիոլոգիայի և համեմատական իրավագիտության ներկայացուցիչ: Պետության էության և կառավարման ձևերի նրա ըմբռնումը: Միապետության և հանրապետության համադրումն ու տարբերակումը: Պետական իշխանության և իրավունքի փոխկապվածության բացահայտումը: Մտածողի դատողությունները տոհմական իրավունքի, սովորույթի և օրենքի վերաբերյալ:

4. Պահպանողականներ: Կ. Լեոնտևի (1831-1891) երկչոտությունը հասարակական-քաղաքական համակարգի վճռական և արմատական վերափոխման ուղղությամբ: Նրա նկատառումները՝ պատմության զարգացման ընթացքի, պետական համակարգերի հերթափոխի՝ կառավարման արիստոկրատական, միապետական, դեմոկրատական սկզբունքները մեկը մյուսով փոխարինվելու մասին:

Ֆ. Դոստոևսկու (1821-1881) հասարակական-քաղաքական հայացքները: Նրա մտորումները համաշխարհային պատմության զարգացման գործում Եվրոպայի և Ռուսաստանի դերակատարման մասին: Քաղաքակրթության և բարոյականության, քաղաքակրթության և ազատության փոխկապվածության մատնանշումը: Հեղափոխության և սոցիալիզմի մերժումը:

5. Վ. Սոլովյովի (1853-1900) քաղաքական-իրավական հայացքները: Իրավական պետության որպես հասարակական համերաշխության կարևոր երաշխիքի ընդունումը: Պետության և կրոնի կապը: Աստվածապետական հասարակական կառույցի կարևոր տարրերը: Քրիստոնեության առաջադիմական սկզբունքները: Քրիստոնեական պետության և քրիստոնեական քաղաքականության հասկացությունների իմաստը: Բարոյականության և իրավունքի,

ազատության և հավասարության, բնական և դրական իրավունքների հարաբերակցությունը:

6. XX դ. սկզբի քաղաքական-իրավական գաղափարները: Մարքսիզմի տարածումը Ռուսաստանում: Պլեխանովի գաղափարական զարգացման փուլերը: Նրա կողմից նարոդնիկության քննադատությունը և կապիտալիստական հարաբերությունների, որպես հասարակության զարգացման օրինաչափ արդյունքի ընդունումը: Բուրժուական հասարակարգի դասակարգային բովանդակության ընդգծումը: Հասարակական վերափոխումների գործում բանվոր դասակարգի դերի մատնանշումը: Սոցիալիստական հեղափոխության և պրոլետարիատի դիկտատուրայի անհրաժեշտության հիմնավորումը: Սահմանադրական հեղափոխական իրավունքի արժեքավորումն իբրև նպաստող, օժանդակող չորձոնի և նրա ստորադասումը՝ պետության դիկտատուրական իշխանությանը:

*Հարցեր 1-4 - անցկացվում են դասախոսություններ:*

*Հարց 5-6 - ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են ինքնուրույն աշխատանքի ընթացքում:*

## **ԹԵՄԱ 21. ԲՈՒՇԵՎԻԿՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ**

(1 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար )

1. Ներածություն: Մարքսիզմի տարածումը Ռուսաստանում և սոցիալ-դեմոկրատական կուսակցության ստեղծումը: Համառուսական մարքսիստական կուսակցության երկփեղկումը՝ բոլշևիկների և մենշևիկների: Նրանց սկզբունքային տարաձայնությունները:

2. Վ.Ի. Լենինի քաղաքական ուսմունքը: Լենինիզմի բնութագրումը որպես XX դ. մարքսիզմի: Վ. Լենինի լրացուցիչ և նորովի փաստարկումները հիմնավորելու համար՝ պետության և իրավունքի դասակարգային էության, սոցիալիստական հեղափոխության և պրոլետարիատի կողմից իշխանության գրավման, հին պետական ապարատի կործանման և նորի հաստատման, կոմունիստական ինքնավարությունում պետության մահացման մասին մարքսիստական դրույթները: Պրոլետարիատի դիկտատուրայի և դեմոկրատիայի նրա մեկնաբանումը: Եվրոպայի միացյալ նահանգների լոգունգի մասին, Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն փուլ, Ապրիլյան թեզիսներ, Պետություն և հեղափոխություն՝ աշխատությունների տեսական արժեքը և գործնական արդյունքները: Վ. Լենինի կողմից Կ.Մարքսի և Ֆ. Էնգելսի առաջադրած առանձին դրույթների վերանայումը: Նոր պայմաններում, նույնիսկ կապիտալիստական տեսանկյունից ոչ առավել զարգացած, մեկ առանձին երկրում, սոցիալիստական հեղափոխության իրականացման և սոցիալիզմի կառուցման հնարավորության մասին փաստարկումները: Խորհրդային հանրապետության որպես սոցիալիստական պետության ձևի հայտնագործումը Վ. Լենինի կողմից: Ազգային հատկանիշներով սոցիալիստական պետական կառուցվածքի սկզբունքների մշակումը և դրանց գործնական արմատավորումը: ԽՍՀՄ կազմավորման գաղափարը:

3. Ն. Բուխարինի քաղաքական գաղափարները: Նրա բոլշևիկյան դիրքորոշումը պետության և իրավունքի դասակարգման էության, բուրժուական պետության ֆունկցիաների ու ձևերի, պրոլետարիատի դիկտատուրայի, խորհրդային պետության բնույթի և նշանակության մասին: Պետության գործունեությունում բռնության գործոնի գերազանցախառնումը նրա կողմից:

4. Ի. Ստալինի քաղաքական հայացքները: Ի. Ստալինի տեսական և փաստական գործունեությունը լենինյան գաղափարների պաշտպանության և կենսագործման ուղղությամբ: Նրա մտորումները սոցիալիզմի պայմաններում դասակարգային պայքարի ընթացքի, պրոլետարիատի դիկտատուրայի առջև կանգնած խնդիրների, հասարակական-քաղաքական համակարգում ԽՄԿԿ դերի, հասարակության և անհատի փոխհարաբերության մասին:

5. Խորհրդային ժամանակաշրջանի իրավահասկացողությունը:

*Հարցեր 1-3 - անցկացվում են դասախոսություններ:*

*Հարց 4-5 - ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են ինքնուրույն աշխատանքի ընթացքում:*

**ԹԵՄԱ 22. XX ԴԱՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ**  
(2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար )

1. Վերլուծական իրավագիտության բնորոշ գծերը: Ժամանակակից վերլուծական իրավագիտությունը որպես նորագույն իրավաբանական պոզիտիվիզմի արդիականացում: Իրավունքի դոգմատիկ հասկացության էությունը: Հերբերտ Հարտի կողմից իրավունքի որպես 'առաջնային' և երկրորդական կանոնների ձևական տրամաբանական համակարգի բնորոշումը: Իրավունքի և բարոյականության, բնական և դրական իրավունքների հարաբերակցությունը:

2. Քելզենի պոզիտիվիստական նորմատիվիզմի տեսությունը: Քելզենի ուսմունքը իրավունքի մասին: Իրավունքի բնորոշումը և նրա բովանդակության ընկալումը: Հիմնական նորմի գաղափարը: Պետության և իրավունքի, իրավունքի և բարոյականության, իրավունքի և քաղաքականության հարաբերակցության ընկալումը: Քելզենի մտորումները բնաիրավական սկզբունքների վերաբերյալ:

3. Պրագմատիկ պոզիտիվիստական ուղղությունը: Պրագմատիկ պոզիտիվիստական հայեցակարգի էությունը: Իրավունքի գործնական դերի ընդգծումը: Ջերոմ Ֆրենկի կողմից պետական մարմինների, պաշտոնատար անձանց որոշումների, դատարանների վճիռների և դատավճիռների իրավական դերի գերազնահատումը: Նրա մտորումները բնական և դրական իրավունքների վերաբերյալ:

4. Համերաշխության և ինստիտուցիոնալիզմի քաղաքական և իրավական տեսությունը: Լ. Դյուգիի հասարակական ֆունկցիաների տեսությունը: Սուբյեկտիվ իրավունքի նրա ընկալումը: Լ. Դյուգիի պետության մասին ուսմունքը: Տ. Օրիոլի քաղաքական-իրավական տեսությունը:

5. Ազատ իրավունքի դպրոցը: Ե. Էրլիխ: Իրավագիտության Սոցիոլոգիական ուղղությունը: Ռ. Պաունդ: Իրավունքի ռեալիստական տեսությունը: Կ. Լլեվելին:

6. Լ. Պետրաժիցկու իրավունքի հոգեբանական տեսությունը: Իրավունքի բնորոշումը: Նրա հոգեբանական արմատների, հիմքերի գերազնահատումը: Իրավունքի և բարոյականության տարբերակումը և հասարակական կյանքում նրանց դերի գնահատումը:

7. Ազգային-սոցիալիստական քաղաքական-իրավական գաղափարախոսությունը: Ազգային-սոցիալիստական քաղաքական-իրավական գաղափարախոսության բնորոշ գծերը: Ֆաշիզմը որպես գերմանական ազգային-սոցիալիստական քաղաքական-իրավական սկզբունքների ինքնատիպ տեսական մարմնավորում: Հասարակական-քաղաքական համակարգի և նրա տարրերի բնորոշումը: Հասարակության և պետության, պետության և կուսակցությունների, հասարակության և անհատի, բարոյականության և քաղաքականության փոխհարաբերության մասին հետադիմական դրույթները:

8. Վերածնված բնական իրավունք: Բնական իրավունքի գաղափարի ընկալումը և պարզաբանումը XX դ.: Բնական և դրական իրավունքների տարբերակումը: Հասարակական կյանքում իրավունքի դերի գնահատումը: Արդարության և իրավունքի, իրավունքի և բարոյականության, իրավունքի և քաղաքականության հարցը: Իրավունքի վրա պատմության ընթացքի ներգործությունը:

*Հարցեր 1-6 - անցկացվում են դասախոսություններ:*

*Հարց 7-8 - ուսանողները համապատասխան ուսումնական գրականության հիման վրա յուրացնում են ինքնուրույն աշխատանքի ընթացքում:*

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### ԲՈՒՆՈՐ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԱԳՐՔԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

1. История политических и правовых учений. Учебник для студентов высших учебных заведений, обучающихся по специальности "Юриспруденция". Под общ. ред. В. Нерсеянца. М., 1997, 2003, 2007
2. История политических и правовых учений. Хрестоматия. М., 1996
3. Правовая мысль: Антология. Сост. В.П. Малахов. Екатеринбург. 2003
4. Хрестоматия по теории государства и права, политологии, историй политический и правовых учений. М., 2000
5. Антология мировой политической мысли. В 5 томах, М., 1997

### Լրացուցիչ գրականություն

1. Аристотель. Политика // Соч. в. 4-х т. Т. 4. М., 1984.
2. Бакунин М.А. Государственность и анархия // Философия. Социология. Политика. М., 1989.
3. Гегель Г.В. Ф. Философия права. М., 1990.
4. Гоббс Т. Левиафан... // Соч. в. 2-х т. Т. 2. М., 1991.
5. Гроций Г. О праве войны и мира. М., 1956.
6. Иеринг Р. Борьба за право. М., 1991.
7. Кампанелла Т. Город Солнца. М., 1954.
8. Кант. И. Метафизика нравов // Соч. в 6 т. Т. 4. Ч. 2. М., 1965.
9. Ленин В.И. Государство и революция // Полн. собр. соч. Т. 33.
10. Локк Дж. Два трактата о правлении // Соч. в 3-х т. Т. 3. М., 1988.
11. Макиавелли Н. Государь // Избр. произвед. М., 1982.
12. Маркс К. и Энгельс Ф. Манифест Коммунистической партии // Соч. Т. 4.
13. Монтескье Ш. О духе законов // Избранные произведения. М., 1955.
14. Мор Т. Утопия. М., 1978.
15. Платон. Государство. Политика. Законы // Соч. в 3-х т. Т. 3. Ч. 1. М., 1971.
16. Руссо Ж. Ж. Об общественном договоре // Трактаты. М., 1969.
17. Спиноза Б. Политический трактат // Избр. произвед. Т. 2. М., 1957.

### Քաղաքական և իրավական ուսմունքների պատմություն առարկայի կիսամյակային քննական հարցաշարան

Հարցաշարանի 1-50 հարցերը նախատեսված են 1-ին ընթացիկ գրավոր քննության համար, 51-89 հարցերը՝ 2-րդ գրավոր քննության: Ամբողջ հարցաշարանը ներառվելու է եզրափակիչ բանավոր քննության տոմսերում:

#### 1-ին ընթացիկ գրավոր քննություն

1. Քաղաքական և իրավական ուսմունքների պատմության առարկան, մեթոդաբանությունը:
2. Քաղաքական և իրավական ուսմունքների պատմության ժամանակագրությունը:
3. Քաղաքական և իրավական գաղափարախոսության աստվածապետական, բացարձակ միապետական էությունը Հին Արևելքի երկրներում:

4. Քաղաքական միտքը Հին Եգիպտոսում: Իպուսերի խոսքը՝ աշխատության տեսական արժեքը:
5. Հին Բաբելոնի քաղաքական միտքը: Համուրաբիի օրենքները:
6. Քաղաքական-իրավական միտքը Հին Հնդկաստանում: Մանուի օրենքների կաստայական բնույթը:
7. Քաղաքական միտքը Հին Չինաստանում: Լաո-Ցզիի, Մո-Ցզիի և Կոնֆուցիոսի առաջադրած դրույթները:
8. Հին Հունական քաղաքական և իրավական գաղափարախոսության ձևավորման և զարգացման փուլերը:
9. Սոլոնի բարեփոխումները:
10. Սոկրատեսի քաղաքական հայացքները:
11. Նախընտրելի պետական կառավարման համակարգի նախագիծը Պլատոնի 'Պետություն' աշխատությունում:
12. Նախընտրելի պետական կառավարման համակարգի նախագիծը Պլատոնի 'Օրենքներ' աշխատությունում:
13. Արիստոտելը պետության դասակարգային կառուցվածքի մասին:
14. Արիստոտելը պետական կառավարման ձևերի և դրանց տարբերակման չափորոշիչների մասին:
15. Արիստոտելի իրավական հայացքները:
16. Սոփեստների քաղաքական և իրավական հայացքները: Բնական և դրական օրենքների տարբերակումը նրանց կողմից:
17. Դեմոկրիտի առաջադիմական դիրքորոշումը մարդկանց հասարակական և նյութական փոխհարաբերության վերաբերյալ:
18. Դեմոկրիտը պոլիսային համակարգի առավելությունների հնարավոր իրացման մասին:
19. Պոլիբիոսի ուսմունքը քաղաքական ձևերի շրջապտույտի մասին:
20. Իրավական համակարգի եռանդամ դասակարգումը Հռոմեական իրավաբանների կողմից:
21. Ցիցերոնը պետության էության, կառավարման ձևերի, արդարացի և անարդարացի պատերազմների մասին:
22. Գրաքոս եղբայրների քաղաքական հայացքները:
23. Քրիստոնեական հավատոսմունքի առաջադիմական սկզբունքները՝ մարդկային ազատության, հասարակական և ազգային հավասարության մասին:
24. Օոստոս Երանելու Աստվածային քաղաք՝ աշխատության տեսական արժեքը:
25. Թովմա Աքվինացին օրենքների տեսակների մասին:
26. Թովմաս Աքվինացին կառավարման ձևերի մասին:
27. Միջնադարյան հերետիկոսությունները. հուսյաններ, թաբորականներ:
28. Ֆրանսիական կուսակրոններ Վիլյամ Օկամի և Մարսելիոզ Պոդվինացու հայացքները աշխարհիկ և հոգևոր իշխանությունների, կանոնական որոշումների և իրավական նորմերի սահմանազատման մասին:
29. Մարսիլիոս Պոդվինացին կառավարման ձևերի, ընտրովի միապետության առավելությունների մասին:
30. Մարսիլիոս Պոդվինացին օրենսդիր և գործադիր իշխանությունների տարանջատման մասին:
31. Մ. Գոշի բնաիրավական սկզբունքները:

32. Մ. Գոշը պետական (թագավորական) իշխանության ծագման ու էության պետության (թագավորի) ինքնիշխանության մասին:
33. Մ. Գոշի և Սմբ.Գունդստաբլի տարբեր մոտեցումները գահաժառանգման հարցում:
34. Գ. Նարեկացու քաղաքական հայացքները:
35. Ն. Մաքիավելին որպես վաղ վերածնության գաղափարախոս:
36. Քաղաքական և իրավական նոր դրույթների առաջադրումը Ն. Մաքիավելու կողմից:
37. Ն. Մաքիավելին կառավարման բացարձակ միապետական և խառը ձևերի մասին:
38. Թ. Մյունցերի քաղաքական հայացքները:
39. Աշխարհիկ իշխանության առաջնայնության հիմնավորումը Մ. Լյութերի կողմից:
40. 16-17-րդ դարերի ուտոպիստ-կոմունիստական գաղափարախոսության բնորոշ գծերը:
41. Հասարակական-քաղաքական նախընտրելի համակարգի նախագիծը Թ. Մորի Ուտոպիա աշխատության մեջ:
42. Հասարակական-քաղաքական նախընտրելի համակարգի նախագիծը Թ. Կամպանելայի Արևի քաղաք-ում:
43. Ժ. Բոդենի պետության ինքնիշխանության տեսությունը:
44. Ինքնիշխանի գործառույթներն ըստ Ժ. Բոդենի:
45. Իլարիոնի Խոսք օրենքի և երանության մասին աշխատության տեսական արժեքը:
46. Ֆիլոֆեի Մոսկվան երրորդ Հռոմն է՝ աշխատության տեսական արժեքը:
47. Հին ռուսական տարեգրությունների քաղաքական նպատակաուղղվածությունը:
48. Իվան Պերեսվետովի պետական կառավարման, բանակի և օրենսդրական համակարգի անհրաժեշտ բարեփոխման մասին:
49. Իոսիֆյանների դիրքորոշումը աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերության վերաբերյալ:
50. Իշխան Կուրբսկու քաղաքական դիրքորոշումը:

## **2-րդ ընթացիկ գրավոր քննություն**

51. Հուգո Գրոցիոսը որպես բնական իրավունքի տեսության ստեղծող: Բնական և դրական իրավական սկզբունքների բնութագրումը նրա կողմից:
52. Հ. Գրոցիոսը պետությունների միջև վեճերը խաղաղ բանակցությունների ճանապարհով լուծելը, արդարացի և անարդարացի պատերազմների մասին:
53. Բ. Սպինոզան իրավունքի և ուժի համաչափության, մարդկանց անօտարելի իրավունքների մասին:
54. Իշխանությունների տարանջատման ինքնատիպ տարբերակի առաջադրումը Ջ. Լոկի կողմից:
55. Պոսֆենդորֆը բնական կացությունից քաղաքական համակարգի անցման գործընթացի, իշխանության և ժողովրդի փոխհարաբերության, պետական կառավարման նախընտրելի ձևի մասին:
56. Չեզարե Բեկարիայի քաղաքական և իրավական հայացքները:
57. Լայբնիցի քաղաքական իրավական հայացքները : Մոնսաղների մասին՝ տեսությունը:
58. Հոբսի բնաիրավական հայացքները, բացարձակ միապետության, որպես պետական կառավարման նախընտրելի ձևի մասին դրույթի առաջադրումը:
59. Դեսնիցկին հասարակության զարգացման փուլերի մասին: Սահմանադրական միապետության և քաղաքային ինքնավարության մասին նրա առաջադրած նախագիծը:

60. Պրոկոպովիչի հայացքները պետական կառավարման ձևերի, գահաժառանգման կարգի մասին:
61. ԱՄՆ-ի անկախության հռչակագրի բնախրավական սկզբունքները, գործնական նշանակությունը և տեսական արժեքը:
62. Թ. Ջեֆերսոնի առաջադիմական դիրքորոշումը ընտրական համակարգի, պետական իշխանության կազմակերպման, իրականացման ձևերի, տնտեսավարման եղանակների մասին:
63. Թ. Պեյնը հասարակության և կառավարության փոխհարաբերության, նրանց տարբերիչ հատկանիշների մասին:
64. Համիլտոնի քաղաքական դիրքորոշումը: Ուժեղ դաշնային իշխանության անհրաժեշտության հիմնավորումը նրա կողմից:
65. Մոնտեսքյոն պետական կառավարման ձևերի բնութագրման և տեսակավորման չափանիշների մասին: Իշխանությունների տարանջատման դասական ուսմունքի առաջադրումը նրա կողմից:
66. Ժ.Շ. Ռուսոյի բնախրավական հայացքները: Նրա առաջադրած ժողովրդաիշխանության տեսությունը:
67. Ժ.Շ. Ռուսոն քաղաքացիական ինստիտուտի, քաղաքացիական և քաղաքական հավասարության մասին:
68. Ֆրանսիական մատերիալիստների քաղաքական և իրավական հայացքները . Դիդրո, Հոլբախ, Հելվեցիուս:
69. Պետական կառավարման ձևերի տարբերակման և դրանց բնութագրման կանոյան չափանիշները:
70. Է. Կանտի առաջադրած դրույթները իրավունքի տեսակավորման, իրավական պետության հիմնական գործառույթի՝ մարդկային ազատության ապահովման ուղղությամբ:
71. Հեգելի իմաստասիրության, քաղաքական և իրավական սկզբունքների եռաստիճան համակարգը: Հավերժական խաղաղության՝ կանոյան տեսության մերժումը:
72. Իշխանությունների տարանջատման ինքնատիպ դրույթի առաջադրումը Հեգելի կողմից: Մտածողի նախընտրելի կառավարման ձևը:
73. Սպերանսկու բարեփոխման ծրագիրը: Նրա մտորումները իշխանությունների տարանջատման, սահմանադրական միապետության վերաբերյալ:
74. Կարամզինը պետական կառավարման ձևերի մասին : Բռնապետության մերժումը և լուսավորյալ միապետական համակարգի հիմնավորումը նրա կողմից:
75. Պոսոշկովը հասարակության տարբեր դասերի իրավունքների հստակեցման, գյուղացիության նկատմամբ հնարավորինս մեղմ քաղաքականության իրականացման, օրինականության ապահովման անհրաժեշտության մասին:
76. Դեկաբրիստական գաղափարախոսության բնորոշ գծերը. բնախրավական սկզբունքները:
77. Պետելի հանրապետական ծրագիրը:
78. Ն. Մուրավյովի առաջադրած նախագիծը սահմանադրական միապետության մասին:
79. Չաադանի առաջադրած դրույթները Ռուսաստանի առաջադիմության ապահովման ուղղությամբ:
80. Բ. Կոնստանի քաղաքական և իրավական հայացքները: Նրա առաջադրած իշխանությունների տարանջատման ինքնատիպ տարբերակը :
81. Լ. Շտեյնի քաղաքական հայացքները: Սահմանադրական միապետության առավելությունների ընդգծումը:

82. Հիերինգի քաղաքական-իրավական հայացքները: Պետության վճռորոշ դերը իրավունքի ստեղծման և պահպանման գործում:
83. Գումպլովիչի քաղաքական-իրավական հայացքները: Իրավական պետության գաղափարի մերժումը նրա կողմից:
84. Մարքսիզմի առաջադրումը: Նրա տեսական աղբյուրները և բաղկացուցիչ մասերը: Պրոլետարիատի դիկտատուրայի մասին ուսմունքը:
85. Ֆ. Էնգելսը պետության և իրավունքի առաջացման հիմնական պատճառների և որոշակի գործոնների ազդեցությամբ՝ աթենական, հռոմեական և գերմանական ուղիների առանձնահատկությունների մասին:
86. Կոմունիստական կուսակցության մանիֆեստը՝ որպես բանվոր դասակարգի քաղաքական պայքարի ծրագիր: Բուրժուական և սոցիալիստական պետական և իրավական հասարակարգերի էությունների տարբերակումը:
87. Մարքսիզմի առանձին դրույթների վերանայումը Վ.Ի.Լենինի կողմից: Վ.Ի.Լենինը սոցիալիստական պետությունների ձևերի մասին: